ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշման նախագիծը մշակվել է ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ , 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի պահանջներով:

Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեում կատարվող փոփոխությունները պայմանավորված են

Ծախսային մասում

1. 09 բաժնի 1 խմբի 1 դասի /Նախադպրոցական կրթություն / գործառնական դասակարգման 4267 /Կենցաղային և հանրային սննդի նյութեր/ տնտեսագիտական հոդվածով պլանավորված 85,002.200 ՀՀ դրամը պակասեցնել 7,526.900 ՀՀ դրամով, որն ավելացնել նույն գործառնական դասակարգման 4511 /Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին/ տնտեսագիտական հոդվածին նախադպրոցական 14 հաստատություններին որպես լրացուցիչ ֆինանսավորում:
2. 09 բաժնի 1 խմբի 1 դասի /Նախադպրոցական կրթություն/ գործառնական դասակարգման 5113 /Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 1,000.000 ՀՀ դրամով, որից՝
   1) 500,000 ՀՀ դրամը ավելացնել նույն գործառնական դասակարգման 5129 /Այլ մեքենաներ և սարքավորումներ/ տնտեսագիտական հոդվածին «Գանձակի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին գազի հաշվիչ ձեռքբերելու նպատակով, իսկ
   2) 500,000 ՀՀ դրամը՝ 04 բաժնի 5 խմբի 1 դասի /Ճանապարհային տրանսպորտ/ գործառնական դասակարգման 5129 /Այլ մեքենաներ և սարքավորումներ/ տնտեսագիտական հոդվածին ձյուն մաքրող կցորդիչ ձեռքբերելու նպատակով: